

1. Փափուռի

Արագ և զվարթ

Նա-նայ, նա-նայ, փա-փուռի, նա-նայ, նա-նայ, փա-փուռի,

*Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:*

*Ջուր է գալիս էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաթում է մարմար քարից,
Նանայ, նանայ, փափուռի:*

*Արև ելավ էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաքավ կանչեց էն քարից,
Նանայ, նանայ, փափուռի:*

*Խնձոր ես ծառի վրա,
Նանայ, նանայ, փափուռի,
Ծաղիկ ես սարի վրա,
Նանայ, նանայ, փափուռի:*

*Անուշ տաղ ասող բըլբուլ,
Նանայ, նանայ, փափուռի,
Կանգնել ես քարի վրա,
Նանայ, նանայ, փափուռի,*

*Մտա բըլբուլի բաղը,
Նանայ, նանայ, փափուռի,
Երգեցի անուշ տաղը,
Նանայ, նանայ, փափուռի:*

2. Արև, արև

Արագ և գվարթ



Ա - րև, ա - րև, դուս ա - րի, հերն ու մե - րըդ



է - կել են, թուր ու թը - վանք բե - րել են,



Գոմ - շի ո - տին տը - վել են, թե դուս կը - գաս՝ քե՛զ կը - տամ,



թե դուս չես գա՝ շան ու գի - լի փա՛յ կա - նեմ:



փա՛յ կա - նեմ:

Արև, արև դուս արի,
 Հերն ու մերդ էկել են,
 Թուր ու թվանք բերել են,
 Գոմշի ոտին տվել են,
 Թե դուս կգաս, քե՛զ կտամ,
 Թե դուս չես գա, շան ու գիլի փա՛յ կանեմ:

* ազատ խոսելով (պարտադիր չէ ճիշտ նոտաներով ասել)


3. Արեգակ



Ա - րև, ա - րև, ե՛կ, ե՛կ, զի - զի քա - թին վե՛ր եկ,



սև, սև ամ - սեր, հե - ռա - ցեր, ա - րև - վին ճամ - փա տը - վեր:



Թո - դեր՝ նա գա մեկ մոտ, նը - րա լույ - սին ենք կա - թոտ,



կար - միր ա - րև, ե՛կ, ե՛կ, նախ - շուն քա - թին վե՛ր եկ:



Ա - րևն հաղ - թեց ամ - սե - թին, շող - քը գը - ցեց սա - րև - թին,



զի - զի քա - թը, տե՛ս, տե՛ս, պըս - պը - դում է ոս - կու պես:



Սի - րուն ա - րև, միշտ ե՛կ, զի - զի քա - թին վե՛ր եկ:

*Արև, արև, ե՛կ, ե՛կ,
Զիպի քարին վե՛ր եկ,
Սև-սև ամպեր հեռացեք,
Արևին ճամփա տրվեք:
Թողեք՝ նա գա մեզ մոտ,
Նըրա լույսին ենք կարոտ,
Կարմիր արև, ե՛կ, ե՛կ,
Նախշուն քարին վե՛ր եկ:
Արևն հաղթեց ամպերին,
Շողքը գրցեց սարերին,
Զիպի քարը տե՛ս, տե՛ս.
Պրսպրդում է ոսկու պեւ:
Միրուն արև, միշտ ե՛կ,
Զիպի քարին վե՛ր եկ:*

